Գյումրու քաղաքապետ պարոն Ս. Բալասանյանին
Գյումրու «Կումարի» պարային համույթի
Գեղ. ղեկ.՝ Հերմինե Մանուկյանից
Հասցե՝ Հակոբյան փ., տուն 48
Հեռ՝. 055 70 40 87

Դիմում

Հարգելի՛ պարոն Բալասանյան

Գյումրու «Կումարի» պարային համույթը հիմնադրել եմ 2012 թվականին: Այս տարիների ընթացքում փորձել եմ մեր բեմադրություններով ներկայացնել հայն ու հայկականը, պարարվեստի միջոցով ներկայացնել ազգային մշակույթն ու ստեղծել իրապես մնայուն, խոսուն, մեր մտածողությունն ու տեսակն արտահայտող բեմադրություններ:

Խումբն այս տարիների ընթացքում կարողացել է պահպանել իր գոյութունը՝ շնորհիվ նվիրյալ աշակերտների, ծնողների եւ այն բարեկամների, ովքեր այս կամ այն կերպ փորձել են օժանդակել մեր աշխատանքին:

Երկրում ստեղծված բարդ իրադրությունը, ինչպես շատերին, այնպես էլ մեզ կանգնեցրեց մի շարք դժվարությունների առջեւ: Նախ համավարակը, հետո նաեւ պատերազմը, կասեցրեցին մի շարք նախաձեռնություններ ու ձեռնարկներ, որոնք կենսական նշանակություն ունեին խմբի պահպանման եւ գոյատեւման համար:

Մենք հստակորեն գիտակցում ենք, որ հիմա օգնության եւ աջակցության կարիք ունեն բոլոր ոլորտները, բայց մյուս կողմից գիտենք՝ մշակույթն այն պատվարն է, որի վրա պիտի կառուցվի մեր երկրի նոր ապագան:

Հարգելի՛ պարոն Բալասանյան, Գյումրու «Կումարի» պարային համույթի աշակերտական եւ ծնողական կազմը ակնկալում է ունեցած հնարավորությունների սահմանում ֆինանսական աջակցություն՝ խմբի կենսագործունեության համար խիստ անհրաժեշտ ծախսեր հոգալու եւ այս դժվարին իրադրությունից դուրս գալու համար: Խոստանում ենք՝ մեր աշխատանքով արդարացնել ձեր՝ այս պահին մեզ աջակցելու պատրաստակամությունն ու փոխադարձել Գյումրու մշակութային՝ կյանքի զարգացմանը նպաստելով:

Գյումրու «Կումարի» պարային համույթի
գեղ. ղեկ.՝ / / Հերմինե Մանուկյան
02 23 2021թ.

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ»
Քարտուղարության բաժին
23.02.2021թ.
3376